ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «22» 04 2015թ. № 558-Ա

«ՌԵԴԻԿՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ռեդիկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը նշանակել.

1) որպես արտադրանքի սերտիֆիկացում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին՝ արտադրանքի այն տեսակների համար, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հրամանի N 1 հավելվածում նշված տեխնիկական կանոնակարգերը՝ շնորհելով Ն-13(Հ-13) 2015 նույնականացնող համարը:

2) որպես արտադրանքի փորձարկում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին՝ արտադրանքի այն տեսակների համար, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հրամանի N 2 հավելվածում նշված տեխնիկական կանոնակարգերը՝ շնորհելով Ն-14(Հ-14) 2015 նույնականացնող համարը:

2. «Ռեդիկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը համապատասխանության գնահատման մարմին նշանակել 3 տարի ժամկետով:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ